

**ԿԱՐԾԻՔ**

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ**

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԻՄՈՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ «ԽԱՂՈՂԱԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ  
ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ  
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 -  
«ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ**

**Ատենախոսության թեմայի արդիականությունը**

Խաղողագործությունը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության հնագույն և ավանդական ճյուղերից մեկն է: Այն գյուղատնտեսական արտադրության համեմատաբար աշխատատար ճյուղ է, ինչի հաշվին գյուղական բնակավայրերում ապահովում է բնակչության զբաղվածություն բարձր մակարդակ: Բացի այդ՝ ազգային տնտեսության համար այնպիսի կենսական կարևորություն ունեցող ճյուղերի բնականոն գործունեությունը, ինչպիսիք են գինեգործությունը և կոնյակագործությունը, մեծապես պայմանավորված է խաղողագործության վիճակով:

Ըստ էության, խաղողագործությունը, կոնյակագործությունը, գինեգործությունը պետք է դիտարկել մեկ ընդհանուր համակարգի՝ խաղողագինեգործական համալիրի համատեքստում, քանզի տնտեսության այս ճյուղերը սերտորեն կապված են միմյանց և հանդիսանում են խաղողի հումքով ոգելից խմիչքների արժեշտային կարևորագույն օղակները: Խաղողագինեգործական համալիրի մեջ ներառվում են «խաղողի արտադրությունվերամշակում-վերջնական արտադրանքի սպառում» արժեշտային բոլոր մասնակից տնտեսավարող սուբյեկտները (խաղողի մթերում, գինեհումքի թորում, չամիչի արտադրություն, վերջնական-պատրաստի արտադրանքի թողարկում, ինչպես նաև թողարկվող արտադրանքի գնմամբ, պահեստավորմամբ, տեղափոխմամբ և վաճառքով զբաղվող կազմակերպությունները): Թվարկվածները

մեկ ամբողջական արժեշտայի առանձին օղակներն են, որոնք կապված են իրար բազմաթիվ կազմակերպական, տեխնոլոգիական, տնտեսական կապերով:

Հայաստանի Հանրապետության՝ հատկապես Արմավիրի մարզի բարենպաստ բնակլիմայական և տնտեսական պայմանները առավելագույնս նպաստում են համալիրի ճյուղերի զարգացմանը և մեծապես պայմանավորում են համալիրի հետագա զարգացման հեռանկարները: Տևական ճգնաժամերից հետո ՀՀ խաղողագինեգործական համալիրում վերջին տարիներին գրանցվել է որոշակի աճ և զարգացում, և այդ միտումները պահպանելու նպատակով խիստ կարևոր է ոլորտի առջև ծառայած նոր մարտահրավերներն ու խոչընդոտները ժամանակին բացահայտելը և դրանց լուծման ուղիներ որոնելը: Խաղողագինեգործական համալիրի զարգացման հեռանկարների բազմակողմանի ու արդիական ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորվում է համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող այնպիսի զարգացումներով, ինչպիսիք են հետքովիդյան տնտեսական նոր իրողությունները, ռուս-ուկրաինական հակամարտությունը և դրա տնտեսական հետևանքները, ինչպես նաև աշխարհաքաղաքական այլ գործոններ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում տնտեսության տարբեր ճյուղերի վրա:

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով, անկասկած կարելի է եզրակացնել, որ ներկայացված ատենախոսության թեման արդիական է և հրատապ:

### **Հետազոտության նպատակը և խնդիրները**

Ատենախոսության հիմնական նպատակն է ՀՀ Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի հեռանկարային զարգացման հիմնահարցերի համակողմանի բացահայտումն ու դրանց լուծման ուղիների առաջադրումը:

Վերոնշյալ նպատակի իրականացման համար հետազոտության շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել խաղողագործության, կոնյակագործության և գինեգործության ճյուղերի զարգացման վիճակն ու միտումները ՀՀ-ում,

- վերլուծել խաղողագինեգործական համալիրի ուսումնասիրությունների տարբեր մեթոդաբանական ասպեկտները, այդ մոտեցումների արտասահմանյան փորձը,
- վերլուծել խաղողագինեգործական համալիրը կարգավորող իրավաօրենսդրական դաշտը և դրա ազդեցությունը ոլորտի գործունեության վրա,
- վերլուծել ՀՀ խաղողագինեգործական համալիրի պետական կարգավորման առանձնահատկությունները,
- ուսումնասիրել ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործության վիճակը, խաղողագործական տնտեսությունների արտադրատնտեսական առանձնահատկությունները,
- ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների առջև ծառայած արդի խնդիրների համակողմանի վերլուծության և բացահայտման նպատակով կատարել հարցումներ՝ ընտրանքային հարցումների մեթոդի կիրառմամբ,
- իրականացնել ՀՀ խաղողագործության ճյուղի արդյունքային ցուցանիշների վրա տարբեր տնտեսական գործոնների ազդեցության էկոնոմետրիկ գնահատում,
- գնահատել Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների գործունեության տնտեսական արդյունավետությունը և դրա վրա տարբեր ներտնտեսային և արտաքին գործոնների ազդեցության բնույթը,
- կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա բացահայտել ոլորտում առկա հիմնախնդիրները,
- մշակել խաղողագինեգործական համալիրի խնդիրների լուծմանն ու համալիրի զարգացմանն ուղղված առաջարկություններ:

### **Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունն ու ձևակերպված խնդիրների կարևորությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը,

ուսումնասիրության օրյեկտն ու առարկան, արդյունքների գիտական նորույթն ու գործնական նշանակությունը՝ արված առաջարկություններով:

Ատենախոսության առաջին՝ «ՀՀ խաղողագիներգործական համալիրի վիճակը, տնտեսական նշանակությունը ազգային տնտեսության համակարգում և զարգացման նախադրյալները» գլխում ուսումնասիրվել են ՀՀ խաղողագործության, կոնյակագործության ու գիներգործության ճյուղերի վիճակը և միտումները:

Ատենախոսը նախ ներկայացրել է խաղողագործության տնտեսական և սոցիալական նշանակությունը և զարգացման միտումները ՀՀ-ում: 2022 թվականի տվյալների հիման վրա ներկայացվել է ՀՀ խաղողի այգետարածքների կառուցվածքն ըստ մարզերի: Վերլուծվել է դրանց փոփոխման, խաղողի համախառն բերքի և միջին բերքատվության դինամիկան 1993-2022 թվականներին: Ըստ խաղողի սորտերի ներկայացվել է այգետարածքների կառուցվածքը, դրանց տեղաբաշխվածությունն ըստ այգետարածքների և տնամերձ հողերի, ինչպես նաև ՀՀ-ում խաղողի մշակությամբ զբաղվող տնտեսությունների տեսակարար կշիռներն ըստ մարզերի:

Աշխատանքում ներկայացնելով գիներգործության և կոնյակագործության ճյուղերի վիճակը և զարգացման միտումները ՀՀ-ում՝ ատենախոսը ցույց է տալիս գինու և կոնյակի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների և աշխատողների թվաքանակի փոփոխությունը 2010-2021 թվականներին, նույն ժամանակահատվածում խաղողի գինու և կոնյակի արտադրության, արտահանման և իրացման ծավալները, ինչպես նաև իրացման գնի փոփոխությունները:

Շատ ողջունելի է այն փաստը, որ ատենախոսն իր աշխատանքում դիտարկել է նաև կոնյակի ոլորտում առկա մրցակցային իրավիճակը, անդրադարձել շուկայի կենտրոնացվածությանը, գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների վարքագծին, ինչպես նաև այն խնդիրներին, որոնք ստեղծում են անհավասար մրցակցային պայմաններ կամ դրսևորում անբարեխիղճ վարքագիծ՝ մոլորեցնելով սպառողներին:

Ատենախոսության այս գլխի, թերևս, ամենահատկանշական եզրահանգումներից մեկն այն է, որ ՀՀ-ում դիտվում է անհամամասնություն խաղողի արտադրության ծավալների աճի տեմպերի և դրա վերամշակումից ստացվող

կոնյակի և գինու արտադրության ծավալների աճի տեմպերի միջև, որին անդրադարձել է նաև Մրցակցության պաշտպանության հանձնաժողովն իր ոլորտային ուսումնասիրության մեջ, և այս փաստը տեղ է գտել նաև աշխատանքում: Սա վկայում է այն մասին, որ ատենախոսը փորձել է բազմակողմանի և խորը մասնագիտական վերլուծություն կատարել:

Ատենախոսության երկրորդ՝ «խաղողագինեգործական համալիրի ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումները, ոլորտում պետական քաղաքականության վերլուծությունը և զարգացման հնարավորությունների գնահատումը Արմավիրի մարզում» գլխում ուսումնասիրվել են խաղողագինեգործության ոլորտի միջազգային և հայրենական տնտեսագիտական հետազոտությունները, վերլուծություններն ու ուսումնասիրությունները, ՀՀ-ում ոլորտը կարգավորող օրենսդրափրավական դաշտը, կիրառվող պետական քաղաքականությունը և ոլորտի վերահսկողական կառուցակարգերը, ինչպես նաև՝ Արմավիրի մարզում խաղողագործության ընդհանուր վիճակը:

ՀՀ Արմավիրի մարզում խաղողագործության վիճակի մասին համակողմանի պատկերացում կազմելու, ինչպես նաև առկա խնդիրների վերաբերյալ ոլորտի տնտեսվարող սուբյեկտների կողմից տեղեկատվություն ստանալու նպատակով արժեքավոր են ատենախոսության շրջանակում իրականացված ընտրանքային հարցումները, որոնցում ներառվել են Արմավիր, Էջմիածին և Բաղրամյան համայնքների տարբեր գյուղական բնակավայրերի խաղողագործությամբ զբաղվող տնտեսավարողներ՝ հարցումների հավաստիության հնարավորինս բարձր ճշգրտություն ապահովելու նպատակով: Հարցումների արդյունքում հայցորդը վերլուծել է մի շարք տվյալներ, որի արդյունքում հստակեցվել է հարցմանը մասնակցած տնտեսությունների խաղողի այգիների տարիքային կազմը, դասակարգվել են տնտեսություններն ըստ չափերի, ներկայացվել են խաղողագործության արդյունքային ցուցանիշները հարցմանը մասնակցած տնտեսություններում: Ըստ հարցման արդյունքների վերլուծության՝ վեր են հանվել

խաղողագործությանը վնաս հասցնող հիմնական բնական գործոններն Արմավիրի մարզում:

Հայցորդի կողմից իրականացվել է նաև ՀՀ խաղողագինեգործական համալիրը կարգավորող պետական քաղաքականության և օրենսդրաիրավական դաշտի վերլուծություն, որի արդյունքում վեր են հանվել այն խնդիրները, որոնք ունեն լուծման անհրաժեշտություն:

Ատենախոսության երրորդ՝ «**խաղողագինեգործական համալիրի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ Արմավիրի մարզում**» գլխում ուսումնասիրվել է համալիրի ճյուղերի արտաքին տնտեսական գործունեության առանձնահատկությունները, կատարվել է համալիրի քանակական գնահատում՝ տնտեսամաթեմատիկական մոդելավորման և էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ, և ստացված արդյունքների համադրմամբ մշակվել և ներկայացվել են համալիրում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ:

Այս գլխում ուսումնասիրվել է խաղողի ինքնաբավության մակարդակը ՀՀ-ում 2012-2021 թվականների ընթացքում, դիտարկվել է թարմ խաղողի, խաղողի գինու, կոնյակի արտահանման կառուցվածքը և ծավալները 2018-2022 թվականներին:

Արժեքավոր է հատկապես աշխատանքում տնտեսամաթեմատիկական մոդելավորման DEA մեթոդի և էկոնոմետրիկ ռեգրեսիոն մեթոդների կիրառմամբ տրված ՀՀ Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի էմպիրիկ գնահատականը:

Ուշադրության են արժանի նաև հայցորդի կողմից վեր հանված խաղողագինեգործական համալիրի զարգացման հիմնահարցերը և նրա կողմից ներկայացված ՀՀ Արմավիրի մարզում դրանց լուծման հիմնական ուղղությունները:

## Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորոյթը հետևյալն են.

- գնահատվել է ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը և առաջադրվել են տնտեսությունների վարման արդյունավետ տարբերակները,
- ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների համակողմանի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են մարզի խաղողագինեգործական համալիրի հիմնախնդիրները, և գնահատվել են զարգացման հնարավորությունները,
- բացահայտվել է ՀՀ խաղողագործության ճյուղի արդյունքային ցուցանիշների վրա տարբեր գործոնների ազդեցության բնույթը,
- առաջադրվել են ՀՀ Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները:

**Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը** պայմանավորված է կիրառական նշանակություն ունեցող առաջարկությունների մշակմամբ՝ ինչպես ոլորտում վարվող պետական քաղաքականության, այնպես էլ խաղողագինեգործությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների, մասնավոր հատվածի ներդրողների կողմից՝ ոլորտի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու, իրենց գործունեությունը պլանավորելու, ինչպես նաև կառավարման գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու գործընթացներում:

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտի Գիտական խորհրդի նիստում, ինչպես նաև «ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Քոթանյանի ծննդյան 95-ամյակին և գիտության համաշխարհային օրվան նվիրված» գիտաժողովի ընթացքում, ՀՀ ԳԱԱ

թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյանի ծննդյան 65-ամյակին նվիրված «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով հանրապետական գիտաժողովի ընթացքում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու նորույթները ամփոփված են հրատարակված 6 գիտական հոդվածներում:

Ընդհանուր առմամբ ատենախոսին հաջողվել է ատենախոսության նպատակին և խնդիրներին համապատասխանող հետազոտություն ներկայացնել: Միաժամանակ աշխատանքում նկատվել են որոշակի թերություններ, որոնք հիմնականում հետևյալն են:

### **Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ**

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքում, այնուամենայնիվ բացահայտվել են որոշակի թերություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Ատենախոսության առաջին գլխում նշվում է, որ «լրջագույն խնդիրներ առկա են նաև խաղողի մթերման գործընթացներում, որոնք պայմանավորված են մի կողմից շուկայում առաջարկի ավելցուկով, մյուս կողմից՝ կոնյակագործության ճյուղում մրցակցային անբարենպաստ միջավայրի առկայությամբ: Խաղողագործների, որպես հումքի մատակարարների, սակարկելու հնարավորությունները սահմանափակ են, իսկ մյուս մատակարարները (սարքավորումների, տեխնոլոգիայի և այլն մատակարարողներ), ի հակադրություն խաղողագործների, վերամշակողների նկատմամբ ունեն սակարկելու բարձր հնարավորություններ»:

Աշխատանքը կշահեր, եթե ներկայացվեր/գնահատվեր, թե որն է այս առումով կոնյակագործության ոլորտում մրցակցային անբարենպաստ միջավայրը (օրինակ՝ հնարավոր հակամրցակցային համաձայնությունների դրսևորում), որն ազդեցություն է ունենում խաղողի ձեռքբերման շուկայի վրա (օրինակ՝

հակամրցակցային համաձայնությունների արդյունքում սահմանվող խաղողի ձեռքբերման միևնույն գին) և տրվեին դրանց լուծման առաջարկներ:

2. Ատենախոսության երկրորդ գլխում նշվում է, որ «կոնյակի արտադրության համար սահմանված պետական տուրքն առաջացնում է ոփսկեր կապված նոր տնտեսավարողների ոլորտ մուտք գործելու հետ, ինչն էլ հնարավոր բացասական հետևանքներ է ունենում ոլորտում մրցակցային իրավիճակի վրա»: Այստեղ անհրաժեշտ է նկատել, որ պետական տուրքը սահմանված է ոչ միայն կոնյակի արտադրության, այլ նաև ներմուծման իրավունք ձեռք բերելու համար, հետևաբար ճիշտ կլիներ նաև անդրադառնալ դրա բացասական ազդեցությանը ներկրում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա, քանի որ այն կարող է շուկայում ստեղծել անհավասար մրցակցային պայմաններ, ինչպես նաև հանգեցնել շուկայից տնտեսավարող սուբյեկտների դուրսմղմանը:
3. «Եզրակացություններ» բաժնում առաջարկվում է «նվազեցնել կոնյակի արտադրության և իրացման պետական տուրքի չափը՝ տարեկան բազային տուրքի 10000-ապատիկի փոխարեն արտադրության համար սահմանել 50-ապատիկը, իսկ իրացման համար պետական տուրքի չափի որոշումը սահմանել՝ ելնելով վաճառքի ծավալներից՝ յուրաքանչյուր լիտրի կամ 22ի հաշվով»: Աշխատանքն առավել կշահեր, եթե ներկայացվեին հաշվարկներ 10000-ապատիկից 50-ապատիկ իջեցնելու հիմնավորման համար, իսկ 22ի հաշվով տուրքի սահմանումը, կարծում եմ, իրատեսական չէ՝ հաշվի առնելով դրանց տարբեր տարողունակությունը, և այս պարագայում ընդունելի է լիտրի նկատմամբ տուրք սահմանելու առաջարկը:
4. Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացված է ռեգրեսիոն գծային մոդել, որն արտահայտում է խաղողի իրացման գների ազդեցությունը մի դեպքում խաղողի այգետարածքների վրա, մյուս դեպքում՝ խաղողի համախառն բերքի վրա: Աշխատանքն ավելի կշահեր, եթե ատենախոսությունում հիմնավորվեր, թե ինչու է ընտրվել ռեգրեսիոն գծային

մողելը, քանի որ հնարավոր է, որ աստիճանային, լոգարիթմական կամ այլ ֆունկցիոնալ տեսք ունեցող ռեգրեսիոն մողելներն առավել լավ բնութագրեին փոփոխականների ռեգրեսիոն կապվածության բնույթը:

5. Օգտագործված գրականության ցանկը ներկայացված է ոչ համակարգված ձևով, ճիշտ կլիներ այն ներկայացվել՝ ըստ առանձին բաժինների, մասնավորապես.

- Օրենքներ և նորմատիվ իրավական ակտեր
- Վիճակագրական տեղեկագրեր
- Մասնագիտական գրականություն
- Էլեկտրոնային կայքեր

### **Եզրակացություն**

Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Հովհաննես Սիմոնի Ասատրյանի կողմից հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը արդյունք է հեղինակի ինքնուրույն գիտական հետազոտության: Աշխատանքում ստացված արդյունքներն ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները, որոնք իրենց արտացոլումն են գտել հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում:

Հովհաննես Սիմոնի Ասատրյանի «Խաղողագործական համալիրի զարգացման հիմնահարցերը ՀՀ Արմավիրի մարզում» թեմայով ատենախոսությունը բավարարում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի և թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակ Հովհաննես Սիմոնի Ասատրյանի արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 -

«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»  
մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,  
տնտեսագիտության թեկնածու

Դ. Ա. Հովհաննիսյան

23 նոյեմբեր 2023 թվականի

Տնտեսագիտության թեկնածու Դավիթ Ալեքսանի Հովհաննիսյանի  
ստորագրության իսկությունը հաստատում եմ.

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի  
գլխավոր քարտուղար



Ա. Վահանյան